ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ »
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

2025թ.

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի Ծանրամարտի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հանդիսանում է հասարակական միավորում՝ ստեղծված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա, որը չի հետապնդում շահույթ ստանալու նպատակ և իրականացնում է հասարակական կարիքների բավարարմանն ուղղված գործունեություն: Կազմակերպությունը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կամավոր միավորմամբ՝ իրենց շահերի ընդհանրության հիման վրա, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, ինչպես նաև հանրօգուտ գործունեություն իրականացնելու նպատակով:

1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ այլ իրավական ակտերի, միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության դրույթների հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեությունը կառուցվում է օրինականության, հավասարության, թափանցիկության, անդամների շահերի ընդհանրության, խտրականության բացառման, բարեխղճության, արդարության, բարեվարքության և մարզական էթիկայի սկզբունքների հիման վրա:

1.4. Կազմակերպությունը իրավասու է իրականացնել իր գործունեությունը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, ինչպես նաև օտարերկրյա պետություններում՝ տվյալ պետությունների իրավական ակտերին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

1.5. Կազմակերպությունը գործում է անդամակցության սահմանափակումների բացակայության հիմքով, բացառությամբ օրենքով սահմանված արգելքների:

1.6. Կազմակերպությունը ստեղծված է անժամկետ՝ չունենալով գործունեության ժամկետային սահմանափակում:

1.7. Կազմակերպությունը իրավասու է, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անդամակցել միջազգային և օտարերկրյա հասարակական կամ ոչ պետական կազմակերպություններին, համագործակցել նրանց հետ և իրականացնել համատեղ ծրագրեր:

1.8. Կազմակերպությունը պարտավոր է իր գործունեության շրջանակներում պահպանել հակադոպինգային կոնվենցիաների և կիրառելի օրենսդրության դրույթները:

1.9. Կազմակերպության անվանումներն են՝

ա) Հայերեն՝ «Հայաստանի Ծանրամարտի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն

բ) Հայերեն հապավումը՝ «ՀԾՖ» ՀԿ

գ) Անգլերեն՝ “Weightlifting Federation of Armenia” non-governmental organization

դ) Անգլերեն հապավումը՝ “WFA” NGO

1.10. Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ (logo), որը հաստատվում է Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշմամբ: Խորհրդանիշը բաղկացած է կարմիր, կապույտ և նարնջագույն կիսաշրջաններից, ստորին հատվածում՝ արտաքին մասում, անգլերեն տառերով՝ «WFA», ներքևի հատվածում՝ «WEIGHTLIFTING FEDERATION OF ARMENIA» մակագրությամբ:

1.11. Կազմակերպությունն ունի իր հայերեն և անգլերեն անվանումներով կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթուղթ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.12. Կազմակերպությունը կարող է ունենալ պաշտոնական կայքէջեր և օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցներից՝ իր գործունեությունը կազմակերպելու նպատակով:

1.13. Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն Իսահակյան փողոց 28 , շենք 3 :

ԳԼՈՒԽ 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Կազմակերպության հիմնական նպատակներն են՝

2.1.1. Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ծանրամարտ մարզաձևի զարգացումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խթանումը:

2.1.2. Ծանրամարտ մարզաձևի բարձրակարգ մարզիչների և մարզիկների պատրաստման գործընթացների համակարգումը:

2.1.3. Հայաստանի ծանրամարտի հավաքական թիմերի մասնակցության ապահովումը օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին և գավաթների խաղարկություններին:

2.1.4. Որպես ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի անդամ՝ հայկական ծանրամարտի շահերի ներկայացումը միջազգային և օտարերկրյա կազմակերպություններում:

2.1.5. Մարզական և գործնական կապերի հաստատում և զարգացում օտարերկրյա ծանրամարտի ազգային ֆեդերացիաների, սփյուռքի կառույցների, միջազգային ասոցիացիաների և այլ միջազգային կազմակերպությունների հետ:

2.1.6. Ծանրամարտ մարզիկների, մարզիչների, մրցավարների և մարզաձևի այլ մասնագետների սոցիալական իրավունքների և այլ շահերի պաշտպանություն, նրանց սոցիալական ապահովության և բարեկեցության մակարդակի բարելավում, ինչպես նաև ծանրամարտի վետերանների և հաշմանդամ մարզիկների նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորում:

2.2. Կազմակերպությունը, իր նպատակների իրագործման համար, իրավասու է՝

2.2.1. Մշակել և իրականացնել ծանրամարտի զարգացման ռազմավարական ծրագրեր և միջոցառումներ:

2.2.2. Կազմակերպել և անցկացնել մարզումներ, ուսումնամարզական հավաքներ, սեմինարներ, որակավորման դասընթացներ, գիտամեթոդական խորհրդակցություններ և կոնֆերանսներ:

2.2.3. Կազմակերպել և անցկացնել ծանրամարտի Հայաստանի առաջնություններ, ինչպես նաև միջազգային մրցաշարեր և առաջնություններ՝ միջազգային ֆեդերացիայի ընտրության դեպքում:

2.2.4. Մշակել և հաստատել Կազմակերպության կողմից կազմակերպվող առաջնությունների և միջոցառումների անցկացման կանոնակարգերը:

2.2.5. Վերահսկել Կազմակերպության կազմակերպած առաջնությունների, մրցաշարերի և մրցույթների ընթացքը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

2.2.6. Կազմել և իրականացնել հանրապետական հավաքական թիմերի մասնակցության ծրագրերը միջազգային առաջնություններին և մրցաշարերին, հաստատել հավաքականի անդամների ցուցակները, լսել հավաքական թիմերի պատվիրակությունների ղեկավարների հաշվետվությունները:

2.2.7. Մասնակցել ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի խորհրդակցություններին, կոնֆերանսներին և ընտրություններին:

2.2.8. Աջակցել հավաքական թիմերի մարզիկների սոցիալական և առողջական վիճակի բարելավմանը, այդ թվում՝ բժշկական ապահովագրության, պարգևավճարների, նպաստների, դրամական աջակցության կամ ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

2.2.9. ՀՀ ծանրամարտի հավաքական թիմերի անդամներին պարգևատրել օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցաշարերում և գավաթների խաղարկություններում գրված մրցանակային տեղերի համար:

2.2.10. Նպաստել ծանրամարտ մարզաձևին վերաբերող կինոնկարների և տեսաֆիլմերի ստեղծման աշխատանքներին:

2.2.11. Նպաստել ծանրամարտ մարզաձևի մասսայականացմանը հանրության շրջանում:

2.2.12. Նպաստել պատանիների և երիտասարդների հայրենասիրական դաստիարակությանը՝ ծանրամարտի միջոցով:

2.2.13. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել դիտորդական առաքելություն:

2.2.14. Նպաստել բարեխղճության, բարեվարքության, էթիկայի և արդարության սկզբունքների պահպանմանը՝ կանխարգելելով ցանկացած անօրինական գործողություն, այդ թվում՝ կոռուպցիա, դոպինգ և պայմանավորված խաղեր:

2.2.15. Ապահովել Կազմակերպության գործունեության, ֆինանսական և հաշվետու տեղեկատվության թափանցիկությունը և հրապարակայնությունը:

2.2.16. Պարտավորվել հարգել մարդու իրավունքները և նպաստել դրանց իրացմանն ու պաշտպանությանը:

2.2.17. Համագործակցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և պետական ու ոչ պետական այլ կազմակերպությունների հետ:

2.2.18. Իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Կազմակերպության կանոնադրությանը:

ԳԼՈՒԽ 3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

3.1. Կազմակերպության պաշտոնական լեզուն հայերենն է: Կազմակերպության բոլոր աշխատանքային փաստաթղթերը, պաշտոնական գրառումները, ժողովների արձանագրությունները, ինչպես նաև այլ փաստաթղթային հոսքը կազմվում և վարվում են հայերենով: Անհրաժեշտության դեպքում կարող են կցվել դրանց ոչ պաշտոնական թարգմանությունները այլ լեզուներով, սակայն հայերեն տարբերակը համարվում է պարտադիր և գերակայող:

3.2. Կազմակերպության բոլոր ժողովների պաշտոնական լեզուն հայերենն է:

ԳԼՈՒԽ 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կազմակերպությունը հանդիսանում է քաղաքական և կրոնական հարցերում չեզոք կառույց՝ գործունեություն ծավալելով բացառապես իր կանոնադրական նպատակների և հասարակական շահի իրագործման շրջանակներում:

4.2. Կազմակերպության անդամները պարտավոր են պահպանել չեզոքություն քաղաքական և կրոնական հարցերում, ինչպես նաև երաշխավորել, որ իրենց գործունեությունը չի խաթարի Կազմակերպության ներքին և արտաքին չեզոքության պահանջները:

4.3. Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել իր ինստիտուցիոնալ անկախությունը, զերծ մնալ ցանկացած արտաքին կամ ներքին քաղաքական ճնշումից կամ անհարկի միջամտությունից: Կազմակերպությունը գործում է ինքնուրույն՝ առանց որևէ անձի, պետական կամ քաղաքական մարմնի ազդեցության:

ԳԼՈՒԽ 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած ֆիզիկական անձ, ով ընդունում է սույն կանոնադրությունը, գործուն մասնակցություն է ունենում Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործման գործում, կատարում է մուտքավճարի և անդամավճարի վճարումները՝ սահմանված կարգով:

5.2. Անդամության դիմումը ներկայացվում է գրավոր ձևով՝ Կազմակերպության Նախագահին: Անչափահասների անդամակցության դեպքում կիրառվում է սույն կանոնադրության 30-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված կարգը:

5.3. Անդամ ընդունելու վերաբերյալ որոշումը կայացվում է Կազմակերպության Նախագահի կողմից՝ ստուգելով դիմումատուի համապատասխանությունը կանոնադրության պահանջներին:

5.4. Կազմակերպությունը պարտավոր է վարել իր անդամների հաշվառման գրանցամատյան, ապահովել անդամների տվյալների պարբերական թարմացումը: Անդամների հաշվառման կարգը և պայմանները սահմանվում են Կազմակերպության Նախագահի կողմից:

5.5. Կազմակերպությունից անդամի դուրս գալը կատարվում է տվյալ անդամի կողմից ներկայացված գրավոր դիմումի հիման վրա կամ Կազմակերպության Նախագահի կողմից ընդունված որոշմամբ՝ սույն կանոնադրության 26-րդ հոդվածով սահմանված պարտականությունների խախտման դեպքերում:

5.6. Կազմակերպության անդամությունը չի կարող դիտարկվել որպես տվյալ անձի իրավունքների կամ ազատությունների սահմանափակման հիմք:

5.7. Կազմակերպության անդամները վճարում են մուտքավճար և անդամավճար՝ դրանց չափերն ու վճարման կարգը սահմանվում են Կազմակերպության Նախագահի կողմից: Նախագահի որոշմամբ մուտքավճարը և անդամավճարը կարող են նվազեցվել կամ ազատվել վճարումից՝ հիմնավորված դեպքերում:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏՎԱՎՈՐ ՆԱԽԱԳԱՀ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԱՆԴԱՄ

6.1. Ծանրամարտ մարզաձևին մատուցած նշանակալի ծառայությունների համար Կազմակերպության Գործադիր կոմիտեի առաջարկությամբ և Ժողովի որոշմամբ որևէ անձի կարող է շնորհվել պատվավոր նախագահի կամ պատվավոր անդամի կոչում:

6.2. Պատվավոր նախագահը և պատվավոր անդամը իրավասու են մասնակցել Կազմակերպության ժողովներին, արտահայտել իրենց կարծիքը և մասնակցել քննարկումներին՝ առանց քվեարկելու իրավունքի:

ԳԼՈՒԽ 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

7.1. Կազմակերպության շահառուներն են Հայաստանի ծանրամարտի հավաքական թիմերի անդամները, այդ թվում՝ տղամարդկանց և կանանց հավաքական թիմերի՝ մեծահասակների, երիտասարդների և պատանիների խմբերի մարզիկները, գլխավոր, ավագ և անձնական մարզիչները, ինչպես նաև թիմերի բժշկական, սպասարկող և վարչական անձնակազմը:

ԳԼՈՒԽ 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

8.1.1. Ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման և վերահսկողություն իրականացնող մարմիններում: Սույն իրավունքը չեն վայելում անչափահաս անդամները:

8.1.2. Անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով մասնակցելու Կազմակերպության ընդհանուր ժողովներին և կոլեգիալ կառավարման մարմինների նիստերին:

8.1.3. Կազմակերպության Գործադիր կոմիտեի կողմից սահմանված կարգով անվճար օգտվելու Կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից:

8.1.4. Ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին և ստանալու դրանց որոշումների պատճենները:

8.1.5. Կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկելու Կազմակերպության ընդհանուր ժողովին՝ եթե տվյալ որոշումը ընդունվել է օրենքի կամ Կազմակերպության կանոնադրության խախտմամբ, կամ եթե խախտվել են Կազմակերպության կամ տվյալ անդամի իրավունքները: Բողոքը կարող է ներկայացվել այդ որոշման մասին տեղեկանալու օրվանից 60 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

8.1.6. Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ և փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության, կառավարման մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարման և դրամական միջոցների օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև ստանալու անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որն վերաբերում է վերջին երեք տարիների ֆինանսական հաշվետվություններին:

8.1.7. Մասնակցելու Կազմակերպության կողմից կազմակերպվող միջոցառումներին:

8.1.8. Իրականացնելու օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

8.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

8.2.1. Կատարել Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված պահանջները և ենթարկվել Կազմակերպության կառավարման մարմինների որոշումներին:

8.2.2. Բարեխղճորեն իրականացնել իր վրա դրված պարտականությունները Կազմակերպության կառավարման մարմինների որոշումների հիման վրա:

8.2.3. Հոգ տանել Կազմակերպության հեղինակության և բարի համբավի պահպանման մասին:

8.2.4. Վճարել մուտքավճար և անդամավճար՝ սահմանված կարգով և չափով:

8.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտած կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Նախագահի որոշմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն կամ Կազմակերպության անդամությունից զրկում:

ԳԼՈՒԽ 9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՊԱՀԱՍ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Կազմակերպության անչափահաս անդամները օգտվում են սույն կանոնադրության 8.1 կետում նշված բոլոր իրավունքներից՝ բացառությամբ Կազմակերպության կառավարման և վերահսկողություն

իրականացնող մարմիններում ընտրվելու իրավունքից, և կրում են սույն կանոնադրության 8.2 կետով սահմանված բոլոր պարտականությունները:

9.2. Տասնչորս տարին չլրացած անչափահաս անձը կարող է անդամագրվել Կազմակերպությանը իր ցանկությամբ՝ օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա:

9.3. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչվել, կարող է անդամագրվել Կազմակերպությանը իր դիմումով՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

ԳԼՈՒԽ 10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

10.1. Կազմակերպությունը որպես իրավաբանական անձ իրավաբանական ուժ ստանում է պետական գրանցման պահից՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի:

10.2. Կազմակերպությունը որպես իրավաբանական անձ ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է բացել բանկային հաշվարկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ՀՀ դրամով և օտարերկրյա արժույթով: Իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտավորություններ, հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող դատարաններում և այլ իրավասու մարմիններում:

10.3. Կազմակերպությունը ինքնուրույն սահմանում է իր կառուցվածքը, խնդիրները, նպատակներն ու գործունեության ձևերը՝ ՀՀ օրենքներին համապատասխան:

10.4. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ սահմանված նպատակներն ու խնդիրները իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով ունի հետևյալ իրավունքները.

10.4.1. Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտականություններ, դատական և այլ իրավասու մարմիններում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

10.4.2. Բացել բանկային հաշիվներ ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ ՀՀ դրամով և (կամ) օտարերկրյա արժույթով:

10.4.3. Իր նպատակներին համապատասխան հիմնել այլ կազմակերպություններ կամ դառնալ դրանց մասնակից:

10.4.4. Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.4.5. Իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել և ապահովել թափանցիկությունը:

10.4.6. Կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ, հանրահավաքներ և ցույցեր՝ օրենքով սահմանված կարգով:

10.4.7. Իր և իր անդամների, շահառուների ու կամավորների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնել և պաշտպանել դատարաններում, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում:

10.4.8. Համագործակցել այլ հասարակական, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում ստեղծել այլ

հասարակական միավորումներ կամ անդամակցել դրանց՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:

10.4.9. Իրականացնել ցանկացած այլ գործունեություն, որն օրենքով արգելված չէ:

ԳԼՈՒԽ 11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Կազմակերպությունը պարտավոր է.

11.1.1. Վարել իր անդամների և կամավորների հաշվառումը:

11.1.2. Եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում ստացել է հինգ միլիոն ՀՀ դրամ և ավելի հանրային ֆինանսավորում, ապա ապահովել անկախ աուդիտ՝ Կազմակերպության ժողովի կողմից ընտրված աուդիտորի միջոցով, և օրենքով սահմանված կարգով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ պետական լիազոր մարմիններին ոչ ուշ, քան հաջորդ տարվա մայիսի 15-ը:

11.1.3. Պաշտոնական կայք ունենալու դեպքում դրա հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը:

11.1.4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պատճառաբանված պահանջով տրամադրել ողջամիտ ժամկետում Կազմակերպության կառավարման մարմինների որոշումների պատճենները և գործունեության մասին այլ փաստաթղթեր՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգումներ անցկացնելու համար:

11.1.5. Կազմակերպության անդամի պահանջով՝ պահանջի ստացումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր փաստաթղթերին, ժողովի որոշումներին կամ տրամադրել այդ փաստաթղթերի պատճենը թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Այս պահանջի կատարման համար կարող է գանձվել փաստաթղթերի տրամադրման ծախսերը գերազանցող վճար:

11.1.6. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

11.1.7. Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով դրանց հրապարակայնությունը:

11.1.8. Եթե Կազմակերպության գույքի աղբյուրը հանրային միջոցներն են (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ հանրային միջոցներ տնօրինող իրավաբանական անձի միջոցները), ապա յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մայիսի 30-ը հրապարակել օրենքով նախատեսված տարեկան հաշվետվությունը՝ Կազմակերպությունների հաշվետվությունների հրապարակման համար նախատեսված կայքում:

11.1.9. Եթե Կազմակերպության գույքի աղբյուրը հանրային միջոցներ չեն, ապա Կազմակերպությունը իրավունք ունի այդ նույն կայքում հրապարակել հաշվետվություններ՝ իր նախաձեռնությամբ, ինչպես նաև իր գործունեության որևէ այլ արդյունքի վերաբերյալ տեղեկատվություն: Նման հաշվետվությունները պահպանվում են առնվազն հինգ տարի:

11.1.10. Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

ԳԼՈՒԽ 12. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը Կազմակերպության ժողովն է:

12.2. Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը Կազմակերպության Գործադիր կոմիտեն է:

12.3. Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը Կազմակերպության Նախագահն է:

12.4. Կազմակերպության վերահսկող մարմինը Կազմակերպության Վերստուգիչ հանձնաժողովն է (կամ Վերստուգողը):

ԳԼՈՒԽ 13. ԺՈՂՈՎԸ

13.1. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշումներ կայացնելու իրավասու մարմինը Կազմակերպության բարձրագույն մարմինն է՝ ժողովը:

13.2. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է չորս տարին մեկ անգամ՝ անձնական մասնակցությամբ կամ հեռահար ձևաչափով (հեռահաղորդակցության միջոցներով), կազմելով նիստի արձանագրություն կամ փաստաթղթային հաստատում: Ժողովի օրակարգի, տեղի և ժամանակի մասին Կազմակերպության անդամներին ծանուցվում է պատվերով նամակով, հանձնման մասին ծանուցման հիմքով կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ ոչ ուշ, քան ժողովի օրը հինգ օր առաջ՝ փաստաթղթորեն հավաստելով ծանուցման ստացման փաստը:

13.3. Եթե Կազմակերպության անդամների թիվը գերազանցում է հարյուրը, ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցիչները՝ Գործադիր կոմիտեի սահմանած կարգով:

13.4. Կազմակերպության արտահերթ ժողովը կարող է գումարվել անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, Նախագահի կամ Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) պահանջով: Գործադիր կոմիտեն պարտավոր է կազմակերպել արտահերթ ժողովը նախաձեռնության ներկայացումից հետո հինգ օրվա ընթացքում՝ պահպանելով կանոնադրությամբ սահմանված հրավիրման կարգը: Արտահերթ ժողովի տեղի և ժամանակի մասին անդամներին ծանուցվում է ոչ ուշ, քան ժողովի օրվանից հինգ օր առաջ:

13.5. Ժողովի իրավասությունները ներառում են՝

13.5.1. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ ընդունման հարցերի քննարկում և հաստատում:

13.5.2. Այլ իրավաբանական անձի ստեղծման, կամ Կազմակերպության մասնակցության վերաբերյալ որոշումների ընդունում:

13.5.3. Գործադիր կոմիտեի, Նախագահի, Վերստուգիչ հանձնաժողովի (Վերստուգողի) ձևավորման, ընտրության (նշանակման) և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշումների ընդունում:

13.5.4. Նախագահի վարձատրության չափը և կարգը սահմանելու հարցերի քննարկում և հաստատում (եթե կիրառելի է):

13.5.5. Կազմակերպության աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրություն, ինչպես նաև՝ եթե Կազմակերպությունը ֆինանսավորվել է պետական միջոցներից հինգ միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով, ապա ապահովել աուդիտի իրականացումը՝ օրենքով սահմանված կարգով:

13.5.6. Կազմակերպության ռազմավարության հաստատում:

13.5.7. Նախորդ տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատում՝ ներկայացված գործադիր մարմնի կողմից:

13.5.8. Կազմակերպության մարմինների այն իրավական ակտերի ուժի դադարեցում, որոնք հակասում են օրենքին կամ Կազմակերպության կանոնադրությանը:

13.5.9. Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշումների ընդունում:

13.5.10. Կազմակերպության լուծարման մասին որոշումների ընդունում, բացառությամբ դատարանի վճռով լուծարման դեպքերի:

13.5.11. Իրականացնել այլ լիազորություններ, որոնք սահմանված են օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ:

13.5.12. Ժողովը հրավիրվում և անցկացվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

13.5.13. Մինչ ժողովի բացումը կատարվում է Կազմակերպության անդամների (կամ նրանց ներկայացուցիչների) գրանցում, որն իրականացվում է Ժողովի նախագահի կողմից:

13.5.14. Ժողովը բացվում է նախապես սահմանված ժամին, իսկ եթե այդ պահին քվորում ապահովված չէ, ապա Ժողովի որոշմամբ կարող է տեղափոխվել ավելի ուշ ժամկետ:

13.5.15. Ժողովը ընտրում է Ժողովի նախագահ:

13.5.16. Ժողովի որոշումները ընդունվում են անդամների (կամ նրանց ներկայացուցիչների) ձայների պարզ մեծամասնությամբ՝ եթե մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից ավելին:

13.5.17. Ժողովի որոշումները ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ՝ յուրաքանչյուր անդամ կամ նրա ներկայացուցիչ ունի մեկ ձայնի իրավունք:

13.5.18. Եթե ժողովում քննարկվում է որևէ մասնակցի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) գույքային կամ այլ շահերի հետ կապված հարց, ապա տվյալ մասնակիցը չի մասնակցում քվեարկությանը:

13.5.19. Օրակարգային հարցերի քվեարկության կարգը սահմանվում է Ժողովի կողմից:

13.5.20. Ժողովի ընդունած որոշումները արձանագրվում են արձանագրությամբ, որը վարում է Ժողովի կողմից ընտրված քարտուղարը:

ԳԼՈՒԽ 14. ՀԾՖ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

14.1. ՀԾՖ Գործադիր կոմիտեն ընտրվում է Կազմակերպության ժողովի կողմից՝ չորս տարի ժամկետով:

14.2. ՀԾՖ Գործադիր կոմիտեի իրավասությունները ներառում են.

14.2.1. Ղեկավարել Կազմակերպության գործունեությունը ժողովների միջև ընկած ժամանակահատվածում:

14.2.2. Քննարկել և որոշումներ կայացնել Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը կամ Նախագահի իրավասություններին:

14.2.3. Նախապատրաստել Կազմակերպության ժողովները, սահմանել պատվիրակների ընտրության կարգը և քվոտան՝ ելնելով Կազմակերպության անդամների ընդհանուր թվից: Կազմակերպության ժողովի գումարման օրվանից առնվազն հինգ օր առաջ կազմակերպել Կազմակերպության ժողովի պատվիրակների ընտրությունը:

14.2.4. Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց՝ բացառությամբ սույն կանոնադրության 13.5. կետով, մասնավորապես՝ 13.5.1, 13.5.3, 13.5.5, 13.5.6, 13.5.8 կետերով ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

14.3. Գործադիր կոմիտեի հերթական նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամ՝ անդամների համատեղ հավաքի, հեռակա կարգով կամ հեռահաղորդակցության միջոցներով, կազմելով նիստի արձանագրություն կամ փոխանակելով փաստաթղթեր՝ իրենց իսկ հեղինակության հաստատմամբ: Գործադիր կոմիտեի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Նախագահի նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն 20%-ի կամ Գործադիր կոմիտեի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով: Գործադիր կոմիտեի նիստերը կարող են անցկացվել ընդլայնված կազմով՝ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների և այլ անդամների մասնակցությամբ:

14.4. Գործադիր կոմիտեի նիստը իրավասու է որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը: Որոշումները ընդունվում են ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստի նախագահողի ձայնը վճռորոշ է:

ԳԼՈՒԽ 15. ՀԾՖ ՆԱԽԱԳԱՀ

15.1. ՀԾՖ Նախագահն ընտրվում է Կազմակերպության ժողովի կողմից՝ չորս տարի ժամկետով:

15.2. Նախագահի իրավասությունների շրջանակում է ՀԾՖ ընթացիկ գործունեության ղեկավարումը և կառավարման մարմինների գործունեության կազմակերպումը:

15.3. Նախագահն իրականացնում է հետևյալ լիազորությունները.

15.3.1. Ապահովում է ժողովների և Գործադիր կոմիտեի որոշումների կատարումը:

15.3.2. Տնօրինում է ՀԾՖ գույքը և ֆինանսական միջոցները, կնքում է գործարքներ Կազմակերպության անունից:

15.3.3. Ներկայացնում է ՀԾՖ-ն Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

15.3.4. Հաստատում և տրամադրում է լիազորագրեր:

15.3.5. Բացում է հաշվարկային և արտարժույթային հաշիվներ բանկերում:

15.3.6. Իր իրավասության շրջանակում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

15.3.7. Հաստատում է ՀԾՖ հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

15.3.8. Հաստատում է ՀԾՖ գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական կանոնները:

15.3.9. Հաստատում է ՀԾՖ-ի և նրա մարմինների հաշվետվությունները:

15.3.10. Իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ:

15.3.11. Կատարում է ժողովի և Գործադիր կոմիտեի կողմից իրեն վերապահված լիազորությունները:

15.3.12. Իր լիազորությունները իրականացնում է առանց լրացուցիչ լիազորագրի՝ ՀԾՖ-ի անունից հանդես գալով:

15.3.13. Վավերացնում է Գործադիր կոմիտեի և ժողովի արձանագրությունների նախագծերը՝ պատրաստված Գլխավոր քարտուղարի կողմից, համաձայն Կազմակերպության կանոնադրության պահանջների:

15.3.14. Պատասխանատու է Գործադիր կոմիտեի ռազմավարական պլանի մշակման գործընթացի և դրա նպատակներին համապատասխանեցման համար:

15.3.15. Ապահովում է, որ Կազմակերպությունը հավատարիմ մնա իր նպատակներին և կառավարման սկզբունքներին:

15.3.16. Ունի Գլխավոր քարտուղարի նշանակման կամ պաշտոնից ազատելու մասին առաջարկություն ներկայացնելու բացառիկ իրավասություն:

15.3.17. Նախագահում է ժողովի, Գործադիր կոմիտեի նիստերը և բոլոր այն կոմիտեների նիստերը, որոնցում հանդես է գալիս որպես նախագահ:

ԳԼՈՒԽ 16. ՀԾՖ ՓՈԽՆԱԳԱՀ

16.1. ՀԾՖ Փոխնախագահն ապահովում է Նախագահի փոխարինումը նրա բացակայության, պաշտոնական գործուղման կամ այլ օբյեկտիվ պատճառների դեպքում, կամ երբ Նախագահը չի կարող կամ չի ցանկանում իրականացնել իր լիազորությունները:

16.2. Կատարում է այլ պարտականություններ և լիազորություններ, որոնք հանձնարարվում են Նախագահի կամ Գործադիր կոմիտեի կողմից:

ԳԼՈՒԽ 17. ՀԾՖ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

17.1. ՀԾՖ Գլխավոր քարտուղարը ընտրվում է Կազմակերպության ժողովի կողմից կամ սույն կանոնադրության 15.3.16 կետի համաձայն նշանակվում է չորս տարի ժամկետով:

17.2. Գլխավոր քարտուղարը հանդիսանում է այն պաշտոնատար անձը, որը, համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, իրավասու է առանց լրացուցիչ լիազորագրի ներկայացնել ՀԾՖ-ն:

17.3. Գլխավոր քարտուղարի իրավասությունները ներառում են.

17.3.1. Ապահովել ժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների կատարումը՝ համաձայն Նախագահի կարգադրությունների:

17.3.2. Նախագահի հետ համատեղ ապահովել, որ Գործադիր կոմիտեի և ժողովի որոշումները պատշաճ կերպով կատարվեն:

17.3.3. Տնօրինել ՀԾՖ-ի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, և կնքել այնպիսի գործարքներ, որոնք կապված են առօրյա գործունեության հետ (ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ ծառայությունների մատուցման պայմանագրեր, աշխատանքային պայմանագրեր), եթե դրանց արժեքը չի գերազանցում հիսուն միլիոն (50,000,000) ՀՀ դրամ կամ դրա համարժեք այլ արժույթով:

17.3.4. Ներկայացնել ՀԾՖ-ն Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

17.3.5. Կազմակերպել ժողովի անցկացումը, Գործադիր կոմիտեի նիստերը և ՀԾՖ-ի այլ մարմինների աշխատանքը:

17.3.6. Հետևել և վերահսկել հաստատված տարեկան բյուջեի կատարումը:

17.3.7. Ապահովել, որ ՀԾՖ-ի ֆինանսական գործառնությունները կատարվեն հաստատված ֆինանսական քաղաքականությանը համապատասխան:

17.3.8. Ապահովել պատշաճ հաշվապահական հաշվառման և ֆինանսական գրառումների վարումը:

17.3.9. Ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի, գրառումների և տեղեկատվության տրամադրումը աուդիտորին:

17.3.10. Հսկել ֆինանսական հաշվետվության տարեկան մասի կազմումը և վերջնականացումը՝ համաձայն սույն կանոնադրության պահանջների:

17.3.11. Կատարել այլ լիազորություններ և պարտականություններ, որոնք վերապահված են Նախագահի կամ Գործադիր կոմիտեի կողմից:

ԳԼՈՒԽ 18. ՄՇՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ

18.1. ՀԾՖ կառուցվածքային ստորաբաժանումները հանդիսացող մշտական կոմիտեները հետևյալն են.

18.1. Տեխնիկական և զարգացման կոմիտե

18.1.1. Տեխնիկական և զարգացման կոմիտեն պատասխանատու է ծանրամարտ մարզաձևի մարզումների և տեխնիկական զարգացման հարցերի վերլուծության, զարգացման ծրագրերի, ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման վերահսկման համար: Կոմիտեն աջակցում է ՀԾՖ անդամներին տրամադրվող ծրագրերի մշակմանը և Գործադիր կոմիտեին տրամադրում է խորհրդատվություն՝ զարգացմանն առնչվող հարցերով: Կոմիտեն կազմված է նախագահի և երեք անդամների կազմից:

18.2. Մրցումների և առաջնությունների կազմակերպչական կոմիտե

18.2.1. Մրցումների և առաջնությունների կազմակերպչական կոմիտեն պատասխանատու է ՀԾՖ-ի կողմից անցկացվող առաջնությունների և մրցաշարերի կազմակերպման համար՝ համաձայն սույն կանոնադրության և գործող կանոնակարգերի: Կոմիտեն բաղկացած է նախագահից և երեք անդամից:

18.3. Մրցավարական կոմիտե

18.3.1. Մրցավարական կոմիտեն ապահովում է մրցումների ընթացքում կանոնների պահպանումը: Կոմիտեն նշանակում է մրցավարներ, կազմակերպում է մրցավարական գործընթացները և վերահսկում մրցավարների որակավորման ու վերապատրաստման ընթացքը: Կոմիտեն բաղկացած է նախագահից և երեք անդամից:

18.4. Բժշկական կոմիտե

18.4.1. Բժշկական կոմիտեն զբաղվում է ծանրամարտ մարզաձևում առկա բժշկական խնդիրների համակարգմամբ, այդ թվում՝ սպորտային բժշկության և հակադոպինգային վերահսկողության հարցերով: Կոմիտեն բաղկացած է նախագահից և երեք անդամից: Անհրաժեշտության դեպքում Բժշկական կոմիտեն առաջարկում է Գործադիր կոմիտեին ոլորտի զարգացմանն ուղղված փոփոխություններ:

ԳԼՈՒԽ 19. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

19.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված հիմունքներով:

19.2. Կազմակերպության գույքը, այդ թվում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը, նրա անդամների միջև չի բաշխվում:

19.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուրներ են՝

19.3.1. Կազմակերպության անդամների ներդրումները:

19.3.2. Կազմակերպության անդամավճարները:

19.3.3. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները:

19.3.4. Իր կողմից ստեղծված կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված ֆինանսական միջոցները:

19.3.5. Պետական բյուջեից ստացված դրամական միջոցները:

19.3.6. Նվիրաբերությունները, այդ թվում դրամաշնորհները:

19.3.7. Հանգանակությունները:

19.3.8. Օրենքով չարգելված այլ աղբյուրներ:

19.4. Կազմակերպությունն իրավասու է իր կանոնադրական նպատակների իրագործման համար իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, տնօրինել իր գույքը և գործունեության

արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ մասնակցել դրանց:

19.5. Կազմակերպությունը պարտավոր է ձեռնարկատիրական գործունեության համար վարել առանձնացված հաշվառում և դրա վերաբերյալ տեղեկատվությունը ներառել օրենքով նախատեսված հաշվետվություններում:

19.6. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը կարող է օգտագործվել բացառապես Կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործման համար:

ԳԼՈՒԽ 20. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

20.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

20.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել ժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ: Լուծարման դեպքում ժողովը ձևավորում է լուծարային հանձնաժողով, որը, ՀՀ օրենսդրությանը համապատասխան, իրականացնում է լուծարման գործընթացի կազմակերպումն ու վերահսկումը, սահմանում է լուծարման կարգը և ժամկետները:

20.3. Կազմակերպությունը լուծարվում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև սնանկության գործընթացի արդյունքում:

20.4. Կազմակերպությունը լուծարվելու դեպքում՝ պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը տրամադրվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա փոխանցվում է պետական բյուջե: